

**Անհրաժեշտ** համարնեցիք տպագրել Դաւիթը բեկ Աւանդիւզբաշեանի և Ա. Պատկանեանի այս երկու զրութիւնները, որոնցով նոքա Մայր Աթոռի Մատենադաւարանին յայտնի ընծայաբերութիւն են կատարում: Դաւիթը բեկը մի խոշոր զումարով զնել է հանգուցեալ Աղեքսանդր Երիցեանի զբադարանը և ամբողջութեամբ նուիրել Մայր Աթոռի ի յիշատակ իւր հանդուցեալ կնոջ, և խոստացել է մաս մաս տալ տասն և հինգ հազար բույլի վանքի մէջ մատենադարանի համար յատուկ շինութիւն շինելու, իսկ Ա. Պատկանեանը՝ պրովեսոր Ք. Պատկանեանի որդին, նուիրել է իւր հանդուցեալ հար զբադարանի այն մասը, որ վերաբերում է հայոց լեզուի զբակ սնութեան և արեելքի պատմութեան: Հետո էլ հանգուցեալի թղթերից հակական բառնաշիւսութեան վերաբերեալ մասը: Երկու նուիրատուներն էլ մի քանի պայմաններ են ասաշարկել շեշտելով յատկապես որ հոգ տարուի դբքերի անիրուստ պահպանութեան և բուն նպատակին ծառայելու համար: Դաւիթը բեկը զբում է: Այդ ընծայաբերութեամբ իմ լուման տալով Մայր Աթոռի պահպառութեան, ևս ցանկացայ նուի՝ ի յիշատակ իմ հանգուցեալ կնոջ մի բարի գործ անել, և առա՞ որ հանդուցեալ հոյ հնադեսի թանգարին զբադարանը սահմանուի անթերի կերպով Մայր Աթոռի մէջ, ու ալ ս զի նրանից շարունակուար օգտուին թէ վանքի միաբանները և թէ հայկական կեանքով հետաքրքրուող անձինք: Իսկ Ա. Պատկանեանը իւր զբութիւնը վերջացնում է հետեւեալ գեղեցիկ խօսքերով: Ես ի սրտէ կցանկանայիս որ իմ նուիրած զբքերը հայ ազգին այնքան օգուտ ըերեն, որքան այդ զբքերից օգտուել է իմ հանգուցեալ հայրը:

Թէ մէկ և թէ միւս ընծայաբերութեան արժեքը կրոնիսկի է, երկու հայ աշխատաւոր մարդկանց, զիանական Ք. Պատկանեանի և աշխատատէր Ա. Երիցեանի զբքերը տէսրերի յիշողութեան հետ որդւոց որդի կատահուին անկորուստ և միենոյն ժամանակ այդ ժողովածուները լրացնում և ծոռնայնում են Մայր Աթոռի մասինադարանը: Յաճախալիք

տեղի ունեցող հալածանքները, երկրի անապահովութիւնը և, այդպիսի կացութեան հետեանք՝ տղիտութիւնը, ամբողջ տասնութեց դար գոյութիւն ունեցող ու էջմիածնի մէջ շատ քիչ բան են ժողով անկորուստ և անկողուպուտ, պահպանուածների մէջ ել ամենաարժեքուոր և մ.ծ նշանակութիւն ունին ամենից աւելի մեր մատենադարանի ձեռագրերը։ Այդ ձեռագրերը բացառապես հայերէն են, միայն այս վերջին երեք չորս տարիները ձեռք բերուեցին մի քանի վրացերէն և աւելի շատ պարսկերէն ձեռագրեր։ Թուի և հաղուագիւտ օրինակների շտառութեամբ մեր ձեռագրատունը անպայման առաջինն է բոլոր նման ժողովածուներից, որից յետոյ կարելի է դառել հետեւալները, Վենետիկի, Երուսաղէմի, Վիեննայի, Պարիզի, Նոր-Զուդոյի, Նոր-Նախիջևանի, Սանասարեան գալոցի, Լազարեան ճեմարանի, Պետերբուրգի մի քանի գրադարանների, Բեռլինի, Կ. Պուի, Անդրայի, Միւնիսինի, Հառլիմի, և Հայաստանի շատ վանքերի ժողովածուները։ Մինչեւ օրս գեռ ևս բազմաթիւ օրինակներ զարդարում են մտանաւոր անձանց գրադարանները, որոնք ըլուական ընթացքով, սակաւ առ սակաւ անցնում են հասարակական գրադարաններին։

Էջմիածնի ձեռագրերի թիւը հասնում է 3563, որին պէտք է կցիլ Խաչիկ վարդապետի ձեռքով մասնաւոր անձինքներից, կամ եկեղեցիներից ու վանքերից ժողովուած և վանքին նուիրուած 150 օրինակ հայերէն և մատ 200 օրինակ պարսկերէն, տաճկերէն և արարերէն ձեռագրեր։ Եաւ պարզ և հասկանալի է, որ, քանի էջմիածնում ուսումնասիրութեան այդպիսի հարուստ պաշար կայ, զօրեղ պահանջ զգացուի օժանդակի նորասղոյն ուսումնակուն մատենագարանին էջմիածնում այդ բանը պահասում է։ ապագիր զբքերը, համարեա առանց բայցառութեան պատահական հաւաքածոյներ են՝ ըստ մեծի մասին մեռած միարաններից մնացած կում աննշան նուեր ներով ժողովուած, նզաններն ել միայն հայերէն լեզով, առարկեզւեան զբքերը այնքան քիչ են և աննշան, որ նըրանց մասին խօսեն իսկ աւելորդ է։ Ճեմարանի մատենագարանը, որ անջատ է, վա՛ք'ց և զետեղուած է, զպրոցա-

կան շինութեան մէջ, անհամեմատ ու Ելի հսրուստ է ու սումնական գրքերով, մանաւանդ հայզիտութեան վերաբերեալ մատով: Ճեմարանի փոփոխուող վարչութիւնները ժամանակ առ ժամանակ հոգ են տարել այդ մասին, բայց տեղի դործ է տեսել Մեծ. Կ. Եղեանը, որ ի յիշատակ Եղիկիրեանի, Սանտարեանի՝ նոցա տուած փողերով, և իւր հաշուով դնել և ճեմարան է ուզարկել բազմաթիւ հազուազիւս և թանգաղին գրքեր: Ճեմարանը նուէր է ստացել նաև հանգուցեալ Դր. Զանշեանի զրադարանը: Այդ ճեռով կազմուած մատենադարանները հարկաւ, չեն կարող միանգամայն բաւականութիւն տալ մասնազիաօրեն պարապովերին, և ամեն մի հրատարակութիւն կատարելին կամ լուրջ ուսումնասիրուած յօդուածներ գրելիս ահաղին զժուարութիւններ է զգացւում: Այդ մեծ կարիքը ներկայումս տեղի շօշափելի է, երբ վանքի մէջ դնալով շատանում է բարձր ուսումնացած միարանների թիւը, և լուրջ, ուսումնական աշխատութիւններ կատարելու ցանկութիւն ունեցողները շատ են:

Քաջածանօթ ճշմարտութիւն է, որ մարդս իւր շրջանի արտադրութիւնն է, որ շրջանը ահաղին նշանակութիւն ունի նրա հոգեկան աշխարհի վրայ: Ես միշտ զգացել եմ աշխատելու անյագ եռանդ եւրոպական մ.ծ կետրոններում եղած ժամանակ, իսկ մեր սիրելի հայրենիքը զիս այնպիսի պայմաններում է, որ, եթէ շատեմ քնացնում և թմրեցնում է, անկասկած շատ և շատ նուազեցնում է, անհատկան եռանդը: Նուրջ բոլոր զիս հանգստութիւն է, կեանքի պայմանները և պահանջները զիս շատ չեն բարդուել և անհատը շուտ է ենթարկեում ընդհանուր թմրեցուցիչ հոսանքին: Մինչդեռ եւրոպական կետրոններում հոգեկան աշխարհի մէջ այնպիսի շփումն է կատարեում: Որ անկարելի է այդ շփումից չտաքանալ և չցնցուել: Մի զրադարանից միւն էր անցնում մասնագետ իրենց առարկան և մշտական նիւթ դարձրած խնդիրը վանաարիկոսութեամբ անձնուեկը անձանց հետ հանդիպում: Որոնք առանձին ոգեսորութեամբ պատմում և բացատրում են իրենց ուսումնացիրած խնդիրը, արդիւնքը ձեզ հաղորդում: վերջապես

ներկայ էք լինում զանազան դասախոսութիւններից կարգում էք նորանոր բրոշիւրներ, հասարակութեան մէջ տեղեկութիւններ ստանում կետնիքի հրատապ խնդիրների մասնաւ և ի՞նչ զարմանիք, որ այդպիսի բնական խթանները թողնում են խոր հետքեր, ցնցում ձեզ, նոր մոռքեր տալիս, շարժում ձեր փառասիրութիւնը, աշխատելու ու ըիշեցից յետ շմալու տենչը:

Մեզնում այդ ամենը պակաս է եղել. մտաւոր հետաքրքրութիւն, մտաւոր շարժում մենք պիտի տաեղծենք արտաքին, քաղաքակիրթ աշխարհի օրինակին հետևելով: Հարգաւոր է ահազին աշխատանիք նախ՝ կռւելու հակաղիք ոյժերի դեմ, ապա արթուն պահելու մարդուս բնածին, դեպի հանգստութիւն թեքուող տեմպերամենար, և վերջապէս բառեղծելու այն շրջանը, որի կարիքն այնքան մեծ է: Ես քանի անդամ ուղղակի մատեմաթիբական ճշտութեամբ հաշուել եմ. այն գրաւոր աշխատութիւնը, որ վանքոււր կատարում եմ երեք ամսուայ ընթացքում: Նոյնը որ եւ եւրոպական մեծ քաղաքում առ առաւելն կատարել եմ մի ամսուայ ընթացքում: Մինչդեռ կարծես հակառակը պիտի տեղի ունենար. վանքում չկան մեծ քաղաքների կողմնակի բաղմաթիւ և բաղմատեսակ հրապոյըները, վանքում ապրող վանականը կարող է տւելի ինքնակամ անօրինել իւր ժամանակը եթե, նո որ եւ պաշտօն չունի. բայց կրկնում ենք, հակառակ այդ արտաքին թուացող յարմարութեան, երբ բացակայում է շրջապատի մղիչ ոյժը, թուլանում է նաև անհատական ինքնակործունեութիւնը, արտազրելու ոյժը:

Եջմիածնի մլչ, իրաւ է զանգաղ, բայց առանց կանգառնելու, և որ զլսաւորն է՝ առանց յետաղիմելու, կատարուել և կատարւում են աչքի ընկնող քաղաքակրթական շարժման գործեր, մտաւոր յայտնի աշխատանիք: Նատ անդամ գործը չէ պակասել, այլ արածը ցոյց տալու, ի տես ամենիքի հրապարակ զնելու շնորհը: Միայն մի հանգամանք ուշագրաւ է. եղած աշխատանքի մեծագոյն մասը մասնաւոր ձեռներէցութեան արդիւնք մինելով, չի ունեցել լայն տաքածում և շարունակութիւն: Յ. Նահամեունեան, Սարգիս

Հասան-Զալյալեան, վ. Բաստամեան և լին. ընկերներ և շարունակողներ չեն ունեցել. իւրաքանչիւրի սկսածը կարծեաիրենով էլ վերջացել է, և կամ առհմանափակուել: Այդ հանգամանքն է պատճառ, որ էջմիածինը մինչեւ օրս չի կարողացել մասւոր կետըն դառնալը յայտնի շկոլա, յայտնի գրական կամ մասւոր շարժում ստեղծել և այդպիսի շարժման զլուխ անցնել: Մեղադրել այդ բանի մեջ վանականութիւնը, հազիւթե արգարացի լիներ, միայն սովորական դարձած նախադատութիւնների կրկնութիւն կլիներ, եթե կամենայինք ընդունակ և կարող անձանց հալածանքով բացատրել մեր հաստատած փասար: Աշխատող անձննչ նոյն իսկ հալածման ըստներում պատուաւոր զիրք, արժանավայել կացութիւն են ունեցել. նոքա լիուլի խրախուսուել և միսիթարուել են հայ ժողովրդից, նոցա անունը միշտ յարդանքով է յիշատակուել: Ճշմարտութիւնն այն է, որ այդպիսի մարդիկ չեն եղել, և ժամանակի բարձր հոգեւոր իշխանութիւնը վարչական կարեւոր գործեր նոցա է յանձնել, հեռացնելով ուսումնական գործունեութիւնից, միջոց չալով որ այդպիսիները իմ ակնարկած գիտական շարժումն առաջ բերեն:

Ես լաւ մտարեցում եմ ներսէս կաթուզիկոսի մի կանգակը, որ նա ուղղել է կոմս Յովհաննէս Լազարեանին և որի մեջ նկարագրել է իւր անելաննելի զրութիւնը բանիքուն միաշանների պակասութեան պատճառաւու: Նա այդպիսիներից յիշատակում է երեք հոգի. Բարսեղ արքեպիսկոպոս, տեղապահ հայրապետութեան, Մակար վարդապետ վերջը կաթուզիկոս, և Յովհաննէս եպիսկոպոս Յահիսաթունեան, — որոնցից իւրաքանչիւրին նա սախողուած էր ծանրաբեռնել զանազան կարեւոր և պատասխանատու յանձնարարութիւններով, և զարձեալ վարանման մեջ էր, որովհետեւ մարդիկ էին պակասում: Բնական է, որ Յահիսաթունեանց և ուրիշները չեին կարող նուիրուել զուտ ուսումնական գործունեութեան, որ նոցա զրած ամեն մի աշխատանք միայն գործերից խած ժամերի արդասիք պիտի լիներ:

Այժմ հանդամանքները փոխուել են բարձրացել է

երկրի կուլտուրական ընդհանուր վիճակը, հայ ժողովուրդը ապահով և խաղաղ կեսնք ունենալով, ընդլացնել է իւր մըտաւոր պաշարը, ուստան և գիտութեան մէջ գնալով յառաջազիմել է։ Այդ ընդհանուր բարւօքումը թողել է խորը հետքեր նաև էջմիածնի միաբանութեան մէջ. այժմ, ինչպէս նկատեցինք, բարձր ուստան ակը միաբանների թիւը մի տասնեւակից աւել է։ Կան այնպիսի միաբաններ, որոնք բացառապէս նուիրուած են գրական-ուսումնական աշխատանքների, և պիսի հաստատապէս յուսալ, որ այդպիսի աշխատութիւնների արդիւնքը գնալով աւելի նկատելի կը դառնայ։ Արդէն ժամանակ է, որ մեր ժողովուրդը, մանաւանդ նրա կրթուած մասը, թողնի իւր սովորական դարձած արհամարհողական վերաբերմունքը և արդարամութիւն ունենայ տեսնելու այն ինչ որ կատարւում է վանքի մէջ։

Նկատելով այս իրողութիւնը, յուսով ենք բարեմիտ ընթերցողի մէջ կասկած չի ծագիլ, թէ զրանով մենք էջմիածնի միաբանութիւնը գովել ենք կամենում։ միայն խընդրում ենք, որ մեր ժողովրդի մտածող մասը փոքր ինչ հաւատ ունենայ դեպի էջմիածնի միաբանութիւնը և դադարի անտեղի և անվայել մեղադրանքներից ու անհիմն հարածանքներից։ Էջմիածնում շատ բան չի կատարւում, շատ բարի գործ սպանուում է իւր սաղմի մէջ, բարի ցանկութիւններ մնում են անիրազորձելի։ բացարձակ անարդարութիւն է, այդ ամենի մէջ շար զիաւորութիւն նկատելի կամ տղիտութեան պառուղներ որոնել։ Երջապատի կուլտուրական ոյժերը գեռ խոր քնի մէջ են, շարժող խմանները սպակառում են, և կարող ենք հաւատացնել, տեղի և անտեղի հայհոյանքը հաղիւ թէ որ և է օգուտ բերի։ Յամենայն դէպս մի բան որոշ է։ վանքի պատրաստուած ոյժերը աշխատում են և լրջօրէն մտածում են մտաւոր վերածնութեան մասին։ Եւ այդպիսի յարմար դէպսում հայ ժողովրդի միջից ի նրապատ այդ ուղղութեան կարկառած ձեռքը անգնահատելի խրախոյս պիտի համարուի։

Դաւիթ բէկ Աւան-իւղաշեանի և Ս. Պատկանեանի

ընծաները դաշիս են դիւրութիւն տալու յատկապէս զուտ ուսումնական գործունէութեան։ Հայ վանքերը միշտ ծառ ուայել են ուսման, հօգեոր կըթութեան որի համար վանականը որոշ յարմարութիւն ունի։ Երբ մենք մինչև մի կամ երկու տարին Եջմիածնի մէջ ուսումնական մասենաղարանի համար յատուկ վայելու շինութիւն կունենանք երբ նրա դահլիճները կլցնենք հայագիտութեան—լայն մտքով առած — մասնագիտութեան վերաբերեալ ամեն տեսակ ձեռնարկներով և գրքերով, այդպիսի մի հաստատութիւն նոր զարկ կտայ և մեծ չափերով կհեշտացնէ մեր առելիքը։

Հանգուցեալ Երիցեանի գրագարանը, տեղաւորուած 14 մեծ արկղերի մէջ, արդէն փոխադրել ենք Եջմիածնի։ Այդ գրքերը ինքս ստացայ Թիֆլիզում՝ մէկիկ մէկիկ ստուգելով հանգուցեալի ձեռքով կազմած և նրա մահուանից յետոյ իւր որդու ձեռքով լրացրած ցուցակներով։ Հարկ էմ համարում հրապարակով յայտնիլ, որ հանգուցեալի այրին, ինչ վերաբերում է ցուցակների մէջ նշանակուած համարներին, գրքերը պահպանել էր համարեա անկորուստ։ Հայերէնի բաժնում չերևեցին 86, ոռւսիրէնի բաժնում 52 դիրքն միայն բոլորն ել աննշան և անարժեք գրքեր։ Հետեւագեսեղածը սպառահական կորուստ պիտի համարել, որի փախարէն ցուցակում չնշանակուած աւել համարներ շատ կային։ Ժամանակին, ինչպէս Գաւիթթ բէկն է խնդրել, առանձնապէս կտպուի ամբողջ գրագարանի ցուցակը, և հասարակութիւնը միջոց կունենայ ծանօթանալ բովանդակութեան հետ։ Աւելորդ չենք համարում այժմենից իսկ նկատել, որ գրադարանի արժեքի և նշանակութեան մասին տարածուած լուրերը անպայման չափալանցութեան վրայ էին հիմնուած։ Այդ գրագարանը որոշ մասերով կլրացնի վանքի ունեցած ժողովածուն, և միայն այդքան նոյն իսկ կովկասագիտութեան մասը շատ թերի է։ ժողովածուի զլիաւոր մասը գրասեր մարդու տարիների ընթացքում ձեռք ընկածի խնամքով պահպանելուն պիտի վերագրել։

Գրքերի համար ժամանակին պիտի յատուկ պահպան-

ներ շինուին, և որովհետեւ շատ մասը անկազմ են, պիտի դործածութիւնից առաջ կազմել արուին, բայց չկամենալով մինչեւ այդ զբքերը արկղերում փակած և անգործադրելի պահել, աեզաւորեցի մեր ունեցած հին պահարաններում որպէս զի ուղղները կարողանան օգտուել:

Ինչ վերաբերում է մատենադարանի շինութեան, զեռ շենք ձեռնարկել, միայն այդ մասին կարեոր ենք համարում տուել, որ շինութիւնը, ինչպէս և նուիրատուի ցանկութիւնն ու պահանջն է, կկառուցանուի ներկայ ժամանակի գըշ բարձարանների յատակագծերի հետ ծանօթ և հմուտ ճարտարապետի ձեռքով գծած յատակագծով, իսկ շինութիւնը վերջանալուց յետոյ կտորագրուի մանրամասն հաշիւ: Նորին Վեհափառութիւնը արդեն հաճել է որոշել շինութեան աեզը՝ միաբանական խցերի կետրոնում և բաւական մօտ ձեմարանին: Վանքի արեւելեան ճակատը այժմ բռնում են տպարանը և Երեմիա եսլիսկոպոսի շինած միաբանական բնակարանները, այս վերջին շինութեան անկիւնից, տաճարի հիւսացին կողմում գտնուած պարափի մեջ, կշինուի մատենագարանը, այնքան հեռու տաճարից որքան արեւելեան երկու շինութիւնները: Մի ճակատով կնայի դեպի Սասիս, միւսով դեպի Արագած լեռոը:

Հանգուցեալ Ք. Պատկանեանի զբաղարանը Պետերբուրգից դեռ չէ սուացուել, որը ըստ համաձայնութեան պիտի ուղարկուի ասպրիլ ամսուայ ընթացքում: Այդ ժողովածուն պրոֆեսորի մահուանից յետոյ մասամբ պակասել է, և իւր ամբողջութեամբ մեր ձեռքը չի անցնելու: Պետերբուրգում եղած ժամանակ մասնաւոր աղբիւրից տեղեկացայ, որ Ա. Պատկանեանը զիտաւորութիւն ունի իւր հօր մատենադարանը ընծայաբերել ս. Էջմիածնին, միայն տատանւում է, համոզուած չինելով, որ զբքերը կտորհաղմուին անկորուսա: Այդ կասկածութեան հիմքը կազմում էին այն անտեղի և չափաղանցրած լուրերը, որ ի հաշիւ վանքի և վանականների շատ շտակերը բռւական միամտարար ատրածում են մեր ժողովրդի մեջ: Հեռու գտնուողները և մեր կեանքին անձանօթ մարդիկ հարկաւ աւելի մեծ հաւատ են ընծա-


յում, ծշմարտութեան տեղ ընդունելով անհիմն լուրերը ևսել թէ Եջմիածնի մատենադարանից գրքեր չեն կորչում, սխալ կլիներ. մենք գիտենք որ Պարիզի Ազգային Մատենադարանից, ուր ատանեակ պահապաններ, զրադարանապետներ կան, որտեղից տուն գիրք չի տրւում, — մի քանի անդամ տեղի են ունեցել յայտնի կորուսաներ. մենք, որ գրքեր ենք տալիս միաբաններին, ուսուցիչներին և աշակերտաներին, չենք կարող հերքել, որ տեղի է ունենում մի կտմ միւս զրքի կորուսար, բայց կարող ենք համարձակ ասել, իրեւ լաւ ծանօթ Եջմիածնի ձեռադրատան հետ, որ տասնեակ տարիների ընթացքում այդտեղ ձեռագրեր միմիայն աւելացել են նորանոր ընծայաբերութիւններով: 1902 թ. մայիս ամսին ես կտղմեցի Լազարեան Ճեմարանի հայերէն ձեռագրերի ցուցակը՝ այնտեղ ես գտայ երկու ձեռագիր գնուած Հ. Կնքենձնանի զրադարանից և նուիրուած Ճեմարանին. երկուսի վրայ էլ կար մեր մատենադարանի կնիքը: Այդ ցաւալի իրողութիւնը տեղի է ունեցել տասնեակ տարիներ առաջ, որ, կը րինում ենք, ոչ մի հիմք չի տալիս շարունակել կատկածով վերաբերուել և ընդհանուր եղբակացութիւն հանել մեր մատենադարանի անխնամ պահպանութեան մասին:

Ա. Պատկանեանը յայտնի մասնագետ է Սիրէի գանազան ցեղերի լեզուի և կեանքի. Նրա այդ մասին զրած աշխատութիւնները տպել է կայսերական գիտութեանց Ճեմարանը. նա միենոյն ժամանակ լաւ վիճակագրագետ է, բայց գժրախտաբար հայերէն չփառէ և շարունակել իւր հօր մասնագիտութիւնը չի կարող: Երբ նա համոզուեց, որ Եջմիածնի վանքումն էլ զրքեր խնամքով պահել և գնահատել զիտեն, ուրախութեամբ համաձայնուեց իւր հօր զրքերը մեզ ուղարկել:

Վեհափառ. Հայրապետը իւր սրբատառ կոնդակներով եւր գոհունակութիւնն է յայտնել և օրհնել նուիրատուներին, ես վերջացնելով խմ խօսքս, ի զիմաց Եջմիածնի միաբանութեան և յատկապէս նրա զրականութեամբ պարագող անդամների, կարող եմ վստահացնել Մեծարդոյ նուիրատուներին և որոնք կկամենան այդ ուղղութեամբ նոյա բարի

օրինակին հետեւել, որ Եջմիածնում ստացուած գրքերը խրնամքով կպահպանուին և ի բարին կղործադրուին։ Երբ մատենադարանի յատուկ շինութիւնը պատրաստ կլինի, այն ժամանակ մենք այնտեղ կմիացնենք վաճքի գրքերը, ձեմաքանի զրքերի մասնադիտական մասը, Երիցեանի և Պատկանեանի զրադարանները, և յուսով ենք, մեզ կյաջողուի Կովկասի մէջ հայերէն և հայագիտութեան գրքերի ամենալրիւ մատենադարանն ունենալ։

### Մերայ Վարդապետ



## Մայր Արքուի մատենադարանի համար ստացուած գրքեր

1. **Մատենադարանը հարստացաւ մի քանի հազար գրքերով՝ ընդունելով** Ա. Երիցեանի գրքերը, նուիրուած Գաւիթ բէկ Աւանիւցաշեանի կողմից, որի մասին յիշեցինք վերև մեր յօդուածի մէջ։

2. «Գուսանի» Ա. և Բ հատորները, երկերկու օրինակ, նուէր օրիորդ Մանէ Ախվերդեանից։ Գուսանքի առաջին հատորը հանդուցեալ բժիշկ Գէորգ Ախվերդեանի հրատարակած Սայեար-Նովայ բանաստեղծի երգերի ժողովածուն է (Մոսկա, ի տպարանի Պատկիմիլայ Գողիէ, 1852), երկորդ հատորը՝ «Հայ առուղներ» ի մի է ժողովուած դարձեալ Գ. Ախվերդեանի ձեռքով, որը սատարութեամբ նրա դուստը Մանէ Ախվերդեանի ի լրյա է ածել «Աղջագրական Հանդիսի» խմբագրութիւնը (Թիֆլիզ 1903 թ.)։

Ուզիդ կէս դար է անցել առաջին և երկրորդ հատորների հըրատարակութեան մէջ և երկուսը միմեանց հետ համեմատելիս, միայն պիտի ցաւել, որ իրեն հանգուցեալին չի յաջողուել սկսածը իւր ձեռով վերջացնել Առաջին հատորը մի լաւ ուսումնասիրութիւն է, հմտու և բանիմաց անձից կատարուած, որտեղ գեղեցիկ յառաջարանին հետեւում է Թիֆլիզի բարբառի քերականութիւնը, իսկ իւրաքանչիւր երգ ունի յատուկ մեկնութիւն, բառերի և մտքերի բացադրութիւններով։ Երկրորդի սկզբում համառօտ նախարանին հետեւում է Ախվերդեանի կենսագրութիւնը, ապա աշուղների երգերը՝ առանց որևէ բացադրութեան, իսկ վերջում դրուած է դժուարիմաց